

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձը Կանանց միջազգային օրվա առթիվ

Գարնան գալու և բնության զարթոնքի հետ մեկտեղ, առաջին տոնը, որը մենք նշում ենք, նվիրված է Ձեզ՝ սիրելի կանայք, մայրեր, քույրեր և աղջիկներ: Թույլ տվեք այս գարնանաբույր տոնի կապակցությամբ շնորհավորել Ձեզ՝ մաղթելով անձնական երջանկություն, քաջատողջություն և բեղմնավոր գործունեություն՝ ի շահ Հայաստան աշխարհի:

Մարտի 8-ից սկիզբ առնող և մինչև ապրիլի 7-ը շարունակվող այս միամսյակը հիանալի ժամանակահատված է, որը լրացուցիչ հնարավորություն է մեզ ընձեռում արտահայտելու մեր սերն ու հիացմունքն այն անսահման քնքշության ու նվիրումի, Աստվածային շնորհի՝ երեխա պարզելու բերկրանքի, մայրական հոգատարության ու ջերմության համար, որը դուք մեզ պարզելում եք մեր կյանքի ընթացքում:

Հայ կինը միշտ եղել է ինչպես իր ընտանիքի, օջախի ամուր սյունը, այնպես էլ բոլորիս տան՝ մեր հայրենիքի հաստատուն հենասյունը: Հայ մոր նվիրումով ու պտղաբերությամբ, հայ կնոջ սիրով ու աշխատասիրությամբ շարունակվում է մեր ազգի շառավիղը, այն լուսավոր ուղին, որը մեզ տանելու է դեպի հավերժություն:

Անուրանալի է Ձեր դերակատարումը մեր ժողովրդի ձեռքբերումների, պատմական դժվարին պահերին տոկունության ու ոգու ամրության պահպանման, մշակութային արժեքների ստեղծման, սերունդների կրթության ու ազգային արժեքների ոգով դաստիարակության գործում:

Միրելի կանայք, կրկին ու կրկին շնորհովորելով Ձեզ Մարտի 8-ի առթիվ՝ ցանկանում եմ տոնական բարձր տրամադրություն, անսահման սեր և ջերմություն: Թող միշտ խաղաղություն ու բարօրություն տիրի ձեր ընտանիքներում և մեր հայրենիքում: Բարին ընդ Ձեզ:

***Հավազույն ցանկություններով ու մեծագույն սիրով՝
ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյան***